# Կանչիր հայրիկին

*Եթե ես լարեմ բոլոր ուժերս հեծանիվը վարելիս, ես տուն կհասնեմ՝ նախքան փողոցներում ջրհեղեղ կսկսվի:*

**Ջուլի Քրնելիուս-Հուանգ**
(Հիմնված է իրական պատմության վրա)
Հեղինակն ապրում է Յուտայում, ԱՄՆ:

***«Ուրախ եկեք, քանզի ես ձեր ուղեկիցը կլինեմ» (Վարդապետություն և Ուխտեր 78.18):***

Յուն դուրս եկավ դպրոցից դեպի մարդաշատ մայթերը: Նրա գլուխը լի էր արտադասարանական պարապունքի մաթեմատիկական խնդիրներով: Մարդիկ անձրևանոցներով արագ քայլում էին: Անձրևի մեծ կաթիլներն արագ ցած էին թափվում, և ամբողջ փողոցը թաց էր:

Յուի ընկերը՝ Լինը, կանգնեց նրա կողքին: «Կարող ես զանգել հայրիկիդ, և նա կգա քո հետևից»,- ասաց Լինը: «Պարոն Զանգն ասում է, որ քաղաքի որոշ մասերում ջրհեղեղ է»:

«Ես ինքս կարող եմ տուն հասնել»:

«Բայց նայիր այս ամբողջ ջրին»: Լինը մատնացույց արեց փողոցում գոյացած և արագ հոսող առվակները:

Մի պահ Յուն տարօրինակ զգացողություն ունեցավ: Գուցե Լինը ճի՞շտ էր: Գուցե նա *պետք է* զանգի հայրիկին, որ իրեն տուն հասցնի՝ նախքան փողոցներում ջրհեղեղ կսկսվի: Սակայն նա և հայրը վիճել էին անցած երեկո, և Յուն դեռևս բարկացած էր: Նա չէր ուզում դիմել հայրիկի օգնությանը:

Յուն սկսեց վարել հեծանիվը և հաջողություն մաղթեց Լինին: *Եթե ես լարեմ բոլոր ուժերս հեծանիվը վարելիս,* մտածեց նա, *ես տուն կհասնեմ՝ նախքան փողոցներում ջրհեղեղ կսկսվի:*

Նա վարում էր իր ողջ ուժով, սակայն շուտով նրա ձեռքերը սառեցին, հագուստները թրջվեցին, և նա ուժասպառ էր լինում: Եվս մեկ անգամ նա մտածեց հայրիկին զանգելու մասին: Արդյո՞ք այդ զգացողությունը Սուրբ Հոգուց էր: Նրան մկրտող միսիոներներն ասել էին, որ Սուրբ Հոգին կարող էր առաջնորդել իրեն: Յուն նայեց երկնքին: Գորշ ամպերի պատճառով չէին երևում շենքերի կատարները: Սակայն նա դեռևս նեղացած էր հայրիկից:

Յուն անտեսեց այդ զգացողությունը և շարունակեց վարել: Ջուրն այնքան բարձրացավ, որ խանութների տերերը փակեցին իրենց խանութները: Մարդիկ ապրանքները տեղափոխում էին բարձր հարկեր: Յուն տեսավ, որ մի մայրիկ իր երկու երեխաներին ջրի վրայով հրում էր փոքրիկ պլաստմասե նավակով:

Ջուրն այնքան էր բարձրացել, որ Յուն այլևս չէր կարող վարել հեծանիվը: Նա ցած իջավ և սկսեց հրել: Այժմ երևի արդեն ուշ էր հայրիկին զանգելու համար, իսկ անձրևը շարունակում էր հորդալ: Ամպրոպ որոտաց, և կայծակը փայլեց նրա գլխավերևում: Յուն վախեցավ: Եվ նա շատ հոգնած էր: Նա առաջ նայեց: Տունը դեռևս շատ հեռու էր: Նա չպետք է անտեսեր Սուրբ Հոգուն պարզապես մի անիմաստ վիճաբանության պատճառով:

Յուն կանգ առավ՝ մի կարճ աղոթք ասելու: Նա չէր կարողանում լսել իր ձայնը անձրևի և ամպրոպի պատճառով, սակայն նա գիտեր, որ Երկնային Հայրը լսում էր իրեն:

«Երկնային Հայր»,- աղոթեց Յուն: «Խնդրում եմ, օգնիր ինձ ապահով տուն հասնել»: Երբ ավարտեց, բավականաչափ ուժ զգաց ճանապարհը շարունակելու համար:

Ի վերջո, Յուն կարողացավ տեսնել իր տունը բլրի վրա: Մրսած, հոգնած և ինչ-որ տեղ կոշիկը կորցրած՝ Յուն մագլցեց բլուրն ի վեր: Նա տեսավ, որ հայրը դրսում իրեն էր սպասում: Հայրիկն արագ ընդառաջ եկավ նրան՝ վազելով ջրերի վրայով:

Երբ հայրը հասավ նրան, նա գրկեց Յուին: «Ես շա՜տ անհանգիստ էի»: Ասաց հայրիկը: «Դու պիտի զանգեիր ինձ»:

«Ես կարծում էի, որ մենք զայրացած ենք իրար վրա»,- ասաց Յուն:

«Ես երբեք չափազանց բարկացած չեմ լինի քեզ օգնելու համար»,- ասաց հայրիկը: Ապա նա վերցրեց Յուի հեծանիվը և հրեց այն բլուրն ի վեր մնացած ճանապարհին:

Նույնիսկ բարձր շենքերի միջև արձագանքող ամպրոպի ու անձրևի աղմուկի ներքո Յուի սիրտը լցվեց ջերմ զգացողություններով: Նա խաղաղություն և ապահովություն զգաց, մինչ հայրիկին հետևելով հասավ տուն: ●

«Մեր Երկնային Հայրը գիտեր, որ մահկանացու կյանքում մենք հանդիպելու ենք մարտահրավերների: . . . Մեզ մահկանացու ուժ և աստվածային առաջնորդություն տալու համար Նա տվել է Սուրբ Հոգին»:

**Երեց Ռոնալդ Ա. Ռազբանդ, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Թող Հոգին առաջնորդի», *Լիահոնա*, նոյեմբեր 2017, 93:**